

# AXA-ի Հատուցման Հիմնադրամի Խորհուրդին Յայտարարությունը

## AXA-ի գումարներուն՝

### ապահովագրեալ հայերու ժառանգորդներուն բաշխման գործընթացին մէջ կատարուած զեղծարարութիւններուն մասին

Իր ստեղծումէն շուրջ 7 տարի վերջ, AXA-ի Հատուցման Հիմնադրամի Խորհուրդը կ'ուզէ հանրութեան ներկայացնել իր գործունէութեան հաշուեկշիռը ի սպաս 1915էն առաջ ապահովագրութեան տէր Հայոց Յեղասպանութեան զոհերու ժառանգորդներուն: Վերոյիշեալ գործունէութեան շրջանակը սահմանուած էր AXA-ի եւ ամերիկահայ փաստաբաններ Մարք Կիրակոսի, Պրայան Քապաթէքի եւ Վարդգէս Եղիայեանի միջեւ 2005 Նոյեմբերին գոյացած համաձայնագրով, որ հաստատուած էր Լոս Անճրլըսի կեդրոնական մարզի դատարանին կողմէ, 2006 Մայիս 16ին:

**2006 Յունիս 7ին, AXA ընկերութիւնը վճարած է 17,5 միլիոն տոլար վերոյիշեալ փաստաբաններուն:**

AXA-ի Հատուցման Հիմնադրամի Խորհուրդը կը բողկանայ ֆրանսահայ երեք անդամներէ՝ Փարիզէն Սամուէլ Շնորհոքեանէ, Լիոնէն Հիլտա Չոպոյեանէ եւ Մարսիլիայէն Զաւէն Գաբրիէլեանէ: Այս Խորհուրդը նշանակուած էր 2007 Օգոստոս 2ին, Լոս Անճրլըսի կեդրոնական մարզի ամերիկացի դատաւոր՝ Քրիսթինա Սնայտրրի կողմէ, որ ընդառաջած էր ամերիկահայ երեք փաստաբաններու առաջարկին:

Իր սիրայօժար աշխատանքին հաշուեկշիռը ներկայացնելով, AXA-ի Հատուցման Հիմնադրամի Խորհուրդը կը փափաքի լուսաբանել հանրութիւնը, իրեն վերապահուած իրաւասութիւններու սահմաններուն մէջ տարած գործունէութեան մասին, որոնք AXA-ի հետ ստորագրուած համաձայնութեան մէջ նշուած էին: Միաժամանակ Խորհուրդը ստիպուած կը զգայ մատնանշելու Լոս Անճրլըսի գրասենեակին կողմէ գումարներու յանձանման եւ բաշխումի գործողութիւններուն մէջ իր նկատած անկանոնութիւնները եւ զեղծումները, զորս 2011 թուականէն սկսեալ ամերիկացի դատաւորին ուշադրութեան յանձնած էր:

AXA-ի հետ համաձայնագիրը Հատուցման Խորհուրդին տուած էր միայն մէկ իրաւասութիւն, որ կը վերաբերէր 1915էն առաջ ֆրանսական ընկերութիւններուն մօտ **ապահովագրուած եւ Ցեղասպանութեան զոհ Հայերու Ժառանգորդներուն տրամադրելի գումարներու արդար բաշխումի վերահսկողութեան**: Ըստ նոյն համաձայնագրին, ամերիկահայ երեք փաստաբանները գումարներուն որոշ մէկ մասը պարտէին բաշխել ֆրանսահայ համայնքի ոչ-շահաբեր կազմակերպութիւններուն (Cf. ANNEXE 1 - «Settlement Agreement» du 18 nov. 2005 - Page 10 - Article VI - Paragraphe 2)

**2007 Սեպտեմբեր 7 ին**, Խորհուրդը տեղեկութիւն ստացաւ ամերիկահայ փաստաբաններէն, Լոս Անճրլըսի մէջ գոյութիւն ունեցող գրասենեակի մը մասին, ղեկավարութեամբ մէկ տարի առաջ **վարձուած վարիչ-տնօրէնի** մը, յանձինս՝ **Բարսեղ Քարթալեանի**: Տնօրէնը պարտականութիւնն ունէր հսկելու թղթածրարներու քննութեան գործընթացին, որու ընթացքին դիմումները պիտի բաժնուէին չորս տեսակներու, ըստ ապահովագրուած անձին հետ ընտանեկան կապին մասին՝ դիմողներուն բերած փաստերուն:

Բարսեղ Քարթալեան նոյնանման **New-York Life**-ի հարցով տնօրինած էր հատուցումներու բաշխման գործը եւ որոշ փորձառութեան տէր էր: Հետեւաբար, ամերիկահայ փաստաբանները Հատուցման Խորհուրդին փոխանցեցին New-York Life-ի գործընթացը ղեկավարող նոյն վարիչ-տնօրէնը՝ եւ նոյն աշխատանքային գրասենեակը վարձելու իրենց որոշումը, ինչպէս նաեւ դիմումներու ընդունման նոյն չափանիշներու ընտրութիւնը:

Ըստ տնօրէն Բարսեղ Քարթալեանի փոխանցած տեղեկութիւններուն, **32** երկիրներէ հասած **13.751** հատուցման դիմումներ ստացուած էին Լոս Անճրլըսի գրասենեակին կողմէ, **2007 Ապրիլ 1ի** եւ վերջին պայմանաժամ՝ **2008 Յունուար 7ի** միջեւ:

Ամերիկահայ փաստաբաններուն հետ Ֆրանսայի մէջ քանի մը հանդիպումներէ ետք, Հատուցման Խորհուրդի անդամներուն համար այցելութիւն մը կազմակերպուեցաւ Լոս Անճրլըսի գրասենեակ, **2008 Մարտին**, նպատակ ունենալով զիրենք ընտելացնել թղթածրարներու քննարկման ձեւերուն: Այդ առիթով, տնօրէնը եւ փաստաբանները Խորհուրդին ծանօթացուցին AXA-ի գործընթացին մաս չկազմող ուրիշ փաստաբան մը՝ **Պերճ Պոյաճեան**, որ սակայն նոյն շէնքին մէջ կը պաշտօնավարէր, զինք ներկայացնելով որպէս թղթածրարներու քննութեան գծով տնօրէնին եւ Խորհուրդին օժանդակ անձնաւորութիւն:

Այդ թուականէն ետք, փաստաբաններէն մէկուն՝ **Պրայան Քապաթէքին** պարտականութիւն տրուած էր պարբերաբար դիմել Հատուցման Խորհուրդին, Լոս Անճրլըսի գրասենեակին ծախսերը վճարելու արտօնութիւն ստանալու համար, ըստ դիմումներու քննութեան գործի յառաջացման:

Իր կարգին, **2009 թուականին**, Հատուցման Խորհուրդը **2893** դժուար դասաւորելի թղթածրարներ քննեց եւ իր որոշումները փոխանցեց Լոս Անճրլըսի գրասենեակին: Յետագային, ամիսներու այս աշխատանքի արդիւնք՝ որոշումները փաստաբաններուն մերժումին բախեցան, այն պատճառաբանութեամբ որ Խորհուրդը շատ առա-

տաձեռն գտնուած էր բաշխումներուն մէջ: Փաստաբանները առաջարկեցին **տուեալ որոշումները յանձնել Պերճ Պոյաճեանին**, որ փորձառութիւնն ունէր New-York Life-ի գործի հատուցման խորհուրդի անդամի իր հանգամանքով: Ան, հատուցում ստացողներու թիւը պակսեցուց, **թէւ Խորհուրդը երբեք տեղեակ չպահուեցաւ** այս վերաքննութեան արդիւնքներէն:

Խորհուրդը **տեղեկացուած** չէր նաեւ **2010 Յունուար 29ին** Լոս Անճըլըսի գրասենեակին կողմէ դիմումներու **պատասխաններու առաքումէն**, ոչ ալ հատուցում **ստացողներու ցանկէն**, որ փաստաբաններու դիմումով կնքուած՝, հետեւաբար անհասանելի էր:

Պատասխաններու առաքումին հետեւեցաւ շրջան մը, ուր Խորհուրդի անդամները **բողոքի կոչեր ստացան աշխարհի չորս ծագերէն**, գումարներու բաշխումին վերաբերող անկանոնութիւններու մասին: Վերջնական հատուցումներէն բոլորովին անտեղեակ՝, Խորհուրդը պահանջեց տնօրէն՝ Բարսեղ Քարթալեանէն, իրեն յանձնել հատուցում ստացողներու վերջնական ցանկը, սակայն վերջինս մերժեց, պատճառաբանելով փաստաբաններուն կողմէ ցանկին վրայ դրուած արգելքը:

**2011 Փետրուար 5ին**, փաստաբան **Պրայան Քապաթէք** Հատուցման Խորհուրդին ներկայացուց դրամական կացութիւնը, որ ցոյց կու տար **364.050 տոլարի մնացորդ** մը: Ան կ'առաջարկէր, որ Խորհուրդը ընտրէ այն կազմակերպութիւնը որուն պէտք է յատկացուէր տուեալ գումարը, միաժամանակ խնդրելով **հաշուեփակի արտօնութիւն** եւ «ոչ պատմական» նկատուող **փաստաթուղթերու փճացման համար Խորհուրդին համաձայնութիւնը**, նպատակ ունենալով Խորհուրդի գործունէութեան պաշտօնական դադարեցումը:

**Առաջարկը կասկածելի կը թուէր**, որովհետեւ տուեալ պարագային Խորհուրդը կը հրաւիրուէր **վաւերացնելու հաշուեկշիռ մը, զոր չէր ստուգած**, նաեւ՝ ընտրելու նպաստընկալ կազմակերպութիւն մը, մինչ՝ փաստաբանները նախորդող նպատաւորումներուն համար անոր կարծիքը անտեսած էին, եւ վերջապէս **արտօնելու այսպէս կոչուած «ոչ պատմական» փաստաթուղթերու փճացումը**, առանց հաշուապահութեան փաստաթուղթերը տեսած ըլլալու: Հատուցման Խորհուրդը համոզուած էր, որ տուեալ փաստաթուղթերը պատմաբաններուն եւ գիտաշխատողներուն համար մեծ կարեւորութիւն կը ներկայացնէին Յեղասպանութեան հետեւանքով հայ ընտանիքներու ապրած ողիսականին ուսումնասիրութեան տեսանկիւնէն:

Հետեւաբար, **Խորհուրդը մերժեց ստորագրել տուեալ փաստաթուղթը**, միաժամանակ փաստաբաններուն առաջարկելով կատարել հաշուապահութեան ամբողջական ստուգումը, արտօնելու համար վերջնական հաշուեփակը: Ի տես հաշուապահական փաստաթուղթերը Ֆրանսա փոխադրելու փաստաբաններուն մերժումին, **Խորհուրդը առաջարկեց ստուգումներ կատարել Լոս Անճըլըսի մէջ (Cf. ANNEXES 2 et 3)**, վերջնական նպատակ ունենալով հաշուեփակի արտօնութիւն տալ, բան մը, զոր փաստաբանները մերժեցին պատճառաբանելով իրենց զբաղուած ժամանակացոյցը:

Խորհուրդի պնդումներուն անսալով փաստաբան Մարք Կիրակոս Ֆրանսա ու-

դարկեց **AXA-ի հաշուապահական մեծ տետրը**: Միայն այս տետրին քննութիւնը բացայայտեց **անկանոնութիւններու** ամբողջ շարք մը, որոնք կը հակասէին **2005 Նոյեմբերին** AXA-ի հետ կնքուած համաձայնագրին տրամադրութիւններուն («**Settlement Agreement**»):

**2011 Ապրիլ 5ին** Խորհուրդը գրաւոր դիմեց ամերիկացի դատաւոր **Քրիսթինա Մնայտըրին**, փաստաբաններուն հետ ունեցած դժուարութիւնները պարզելով, եւ հաշուապահութեան ամբողջական ստուգումը կատարելու դատարանին արտօնութիւնը հայցելով, միաժամանակ խնդրելով որ դատաւորը չարտօնէ AXA-ի գործին վերաբերող նուազագոյն փաստաթուղթի փճացումը: Դատաւորը անպատասխան ձգեց դիմումը, հետեւաբար Հատուցման Խորհուրդի երեք անդամները որոշեցին ճամբորդել դէպի ԱՄՆ, իրենց հաշույն, **2011 Ապրիլ 22էն մինչեւ 30**, դատաւորին կողմէ ընդունուելու վերջին ճիգով մը:

Վերջապէս, բազմիցս կրկնուած խնդրագիրներէ ետք, 2011 Ապրիլ 28ին, դատաւոր **Քրիսթինա Մնայտըր** Խորհուրդի անդամները ընդունեցաւ, որուն իբր արդիւնք հրահանգեց փաստաբաններ՝ Մարք Կիրակոսին եւ Պրայան Քապաթէքին, որ արագօրէն Ֆրանսա փոխանցեն պահանջուած բոլոր փաստաթուղթերը: Բայց մերժեց Խորհուրդին հաշիւներուն ամբողջական ստուգում կատարելու իրաւասութիւնը :

Նոյն տարուան **Մայիս 11ին**, հաշուապահական փաստաթուղթերը պարունակող ծրարներ դրկուեցան Ֆրանսա: 2011 **Մայիս 16ին** ստացուած հաշուապահական փաստաթուղթերը ստուգելով, Խորհուրդը յայտնաբերեց տարբեր տեսակի խախտումներ.

- Պերճ Պոյաճեանի կողմէ չէքերու, գումարներու իւրացումներ իր անձնական կամ ընտանեկան պարագաներու հաշույն (**Files 226, 234 - Case 2: 02-cv-01750-CAS-Mc**),

- Չէքեր՝ տրուած ընկերակցութիւններու, որոնք փոխանցուած ու գանձուած են ուրիշ դրամատնային հաշիւներէ (**6 չէքերու պատճէններ, CATHOLICOSSAT-ի անունով արձանագրուած**),

- **2,5 միլիոն տոլար**, որ փոխանցուած է այլ դրամատան մը հաշիւին (**Files 159-1, 160 – Case 2 : 02-cv-01750-CAS-Mc**),

- **Մեծածախս գանձումներ փաստաբաններու կողմէ (Exhibit 1 – Transaction details):**

Հատուցման Խորհուրդը գրեց դատաւորին, զինք տեղեակ պահելու համար յայտնաբերուած այս խախտումներէն, որոնք կրնային շահատակութիւններ ըլլալ, խնդրելով հաշիւներու ամբողջութիւնը ստուգելու իրաւասութիւն, եւ կամ հակառակ պարագային անկախ քննչական գրասենեակի մը նշանակումը:

Սակայն, Խորհուրդը զարմանքով ստացաւ 01/02/2012ին դատաւորին որոշումը (**ANNEXES 10, 10-1, 10-2 – Files 196 – 196-1 – 196-2**), որ **Մարք Կիրակոսը եւ Ռոման Սիլվերֆելտը (Վարդգէս Եղիայեանը ներկայացնող)** կը նշանակէր ստուգելու համար հաշիւները եւ հարցապնդելու երկու կասկածելիները՝ **Բարսէղ Քարթալեան եւ**

## Պերճ Պոյաճեան:

Այսօր, AXA Հիմնադրամի Հատուցման Խորհուրդը հետեւեալ երեւոյթներուն մասին կը հարցադրէ.

- Ինչո՞ւ իրաւատէր ժառանգորդներու ցանկը արգելքի տակ դրուած էր եւ Ֆրանսայի Խորհուրդին մերժուած անոր յանձնումը, հակառակ անոր որ դեռ 2007 Նոյեմբեր 27ին փաստաբան **Պրայան Քապաթէք** կը տեղեկացնէր **տնօրէն Բարսեղ Քարթալեանին, որ ինք պաշտօնապէս Խորհուրդին կը յանձնէր հատուցման բոլոր գործողութիւններուն հսկողութիւնը:**

- Ինչո՞ւ, 2011ին, ամերիկացի փաստաբանները կուզէին Խորհուրդին կողմէ հաշիւներու ճշդուած ըլլալու հաստատագիրը, որպէսզի շտապ կերպով փակէին հաշիւները եւ ջնջէին «ոչ-պատմական» որակուած հաշուապահական փաստաթուղթերը:

- Ինչպէ՞ս կրնային փաստաբանները անտեսած ըլլալ գոյութիւնը 2,5 միլիոն տոլարի, որ փոխանցուած էր նոր դրամատան մը հաշուին, եւ որ «մոռցուած» էր **ըստ Դատարանի կողմէ յանձնարարուած հարցապնդումի մը ընթացքին տնօրէն Բարսեղ Քարթալեանի 2011 Յունիս 2ի յայտարարութեան**, Ֆրանսական Խորհուրդին կողմէ անկանոնութիւններու յայտնաբերումէն ետք:

- Ո՞վ բացած էր այս նոր հաշիւը այլ դրամատան մը մէջ:

- Ո՞վ օգտուած էր այն չէքերէն որոնք հասցեագրուած էին իրաւատէրերու, որոնք երբեք չստացան այդ գումարները:

- Որքա՞ն է գեղծարարութիւններուն ճշգրիտ չափը:

- Ինչպէ՞ս Պերճ Պոյաճեան կրցաւ ձեռք ձգել այն չէքերը, որոնք տարբեր իրաւատէրերու հասցեագրուած ըլլալով հանդերձ, փոխանցուած էին իրեն պատկանող հաշիւներու:

- Ինչո՞ւ դատաւորը ստուգող անկախ մարմնի մը նշանակումը չպահպանեց, երբ Խորհուրդին բողոքները ի յայտ բերած էին դրամական գեղծարարութիւններ, որոնց վերջնական պատասխանատուութիւնը մինչեւ օրս կը մնայ անորոշ:

- Թէեւ իր իրաւասութեան սահմաններէն դուրս կը մնայ, սակայն Խորհուրդը դիտել կու տայ, որ ո՛չ Ֆրանսայի ոչ-շահաբեր կազմակերպութիւններուն կատարուած 3 միլիոն տոլարի յատկացումը, ո՛չ ալ դրամագլուխին մնացորդին իրաւատէրերու ժառանգորդներուն բաշխումը չէ կատարուած ըստ 2005 թուականին AXA-ի հետ կնքուած համաձայնագրի տրամադրութիւններուն: Այս վերջինս պայման կը դնէր, որ այդ կազմակերպութիւնները պէտք է ըլլային Ֆրանսայի հայկական համայնքին պատկանող: Արդ, փաստաբանները, ոչ միայն ամբողջովին չեն բաժնած 3 միլիոն տոլարի գումարը որուն պէտք է աւելնար մնացորդը, այլ անոնք այդ գումարին կա-

րեւոր մէկ մասը յատկացուցած են Ֆրանսայէն դուրս գտնուող կազմակերպութիւններու:

Աւելին, նոյնիսկ Խորհուրդին կողմէ կատարուած մասնակի ստուգումը ցոյց տուած է, որ ֆրանսական կարգ մը ընկերակցութիւններու անունները որոնք նշուած էին նպաստառուներու ցանկին վրայ, երբեք չեն ստացած համապատասխան չէքերը: Ընկերակցութիւններու անունով գրուած չէքեր անընթեռնելի ստորագրութեամբ զեղծուած եւ փոխանցուած են այլ հաշիւներու:

Այլապէս, երեք փաստաբաններու հատուցումներուն վերաբերեալ, 2005 թուականի համաձայնագիրը, ստորագրուած AXA-ի հետ, կը նախատեսէր վճարում մը, որ պետք չէր գերազանցեր 1 միլիոն տոլարը իւրաքանչիւր փաստաբանի համար: Արդ, 1 միլիոնէն անդին, որ գանձուած էր 2007ին, իւրաքանչիւր փաստաբան ստացած էր յաւելեալ գումարներ՝ վարչական «անկանխատեսելի» ծախսերու կամ ճամբորդութիւններու համար:

Աւելի՛ն, փաստաբաններու խընդրանքով, եւ նկատի առնելով իրենց միջեւ գոյացած անհամաձայնութիւնները, դատաւորը՝ **Քրիսթինա Սնայտըրը** որոշեց իւրաքանչիւր փաստաբանի յատկացնել մնացեալ գումարին մէկ երրորդը, որպէսզի անոնք ըստ իրենց հայեցողութեան բաշխեն իրենց յարմար դատած ընկերակցութիւններուն:

Վերջապէս, Խորհուրդը մերժեց 2014 Մարտ 31 թուագրեալ աւարտագիր մը ստորագրել, որ կը սէր, թէ կողմերը իրաւունք չունին դրամական բաշխումին եւ վարչարարութեան վերաբերեալ զիրար զեղծարարութեամբ ամբաստանելու: Սոյն մերժումէն ետք եւ փաստաբաններու առաջարկին ընդառաջելով, դատաւորը հրահանգեց Խորհուրդին վճարել խորհրդանշական գումար մը, շատ աւելի նուազ քան ծախսուած գումարները եւ 2005 Նոյեմբերին AXA-ի եւ «Class Counsel»ի համաձայնութեամբ նախատեսուած փոխհատուցումը:

Կը յիշեցնենք որ Խորհուրդը 2010 Յունուար 13ին ստացուած փոխհատուցումի առաջին գումարը ամբողջութեամբ տրամադրած էր «հանրային առումով օգտակար» («utilité publique») ճանաչումը ունեցող հայկական կազմակերպութեան մը:

Վերոնշեալ տեղեկագրի հիման վրայ, AXA-ի Հատուցման Հիմնադրամի Խորհուրդը կը փափաքի լուսաբանել այս թղթածրարի բոլոր ծայքերը: ■